ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 442-Ա

«ՎԻՎԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության հայ համայնքի միջոցներով «ՎԻՎԱ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված՝ ստորև նշված ապրանքների ներմուծման և Լեռնային Ղարաբաղից տեղահանված քաղաքացիներին ու Հայաստանի Հանրապետությունում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքներին անհատույց բաշխման ծրագիրը՝

1) ապրանքներ (ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի)՝ 2,430 տեղ, 6,015 կգ ընդհանուր քաշով, 1,741,048.40 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 345,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ, «ԵՏՄ» բեռ.

2) ապրանքներ (ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի)՝ 180 կգ ընդհանուր քաշով, 412,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, «ԵՏՄ» բեռ.

3) ապրանքներ (ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի)՝ 201 տեղ, 2,364 կգ ընդհանուր քաշով, 1,525,715 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ,

փոխադրման ծախսերը կազմել են 104,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ, «ԵՏՄ» բեռ:

2. «ՎԻՎԱ» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու անհատույց բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահման-ված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

24.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ